

## Մրցունակություն և աճ [1]



Մրցունակությունը, որի հիմքում ընկած է արտադրողականության բարձր և մշտապես աճող մակարդակը, չի կարող կանխորոշվել պարզապես ռեսուրսներով ապահովվածության հաշվին: Այն կապված է երկրների ռեսուրսները և բիզնես միջավայրի գործոնները արդյունավետ օգտագործելու ունակության հետ: Այս համատեքստում մրցունակությունը նույնացվում է ազգի, ձեռնարկությունների և քաղաքացիների կողմից նշված ունակության զարգացմանն ուղղված հիմնավոր ռազմավարությունների մշակման կարողության հետ:

Ոլորտում մեր նախաձեռնությունները ամփոփված են հետևյալ ընդարձակ դասակարգումներում:

### Հայաստանի մրցունակություն [2]

Մրցունակությունը ներկայումս Հայաստանի պետական այրերի, ինչպես նաև հայաստանյան ընկերությունների առջև ծառայած հիմնական մարտահրավերից է: Մրցունակության մակարդակից է կախված, թե Հայաստանը կկարողանա արդյոք կայուն և ներդաշնակ տնտեսական աճ ապահովել: Մինչ այժմ Հայաստանի տնտեսական կատարողականը զգալիորեն կախված է եղել արտաքին գործոններից (դրամական փոխանցումներ, միջազգային ֆինանսական ու նվիրատու (դոնոր) կազմակերպությունների օգնություն): Մենք ձգտում ենք նպաստել Հայաստանի մրցունակության բարելավմանն ուղղված երկխոսությունների և վերուժությունների հորացմանը: «Տնտեսություն և պոժեներ» հետազոտական կենտրոնի առանցքային վերլուծությունը Հայաստանի ազգային մրցունակության զեկույցը, նպատակ ունի նպաստել նշված գործընթացներին:

### Համաշխարհային մրցունակություն [3]

Մրցունակությունը պայմանավորվում է ազգերի կողմից այնպիսի միջավայր ստեղծելու ունակությունով, որը թույլ կտա ձեռնարկություններին և անհատներին արդյունավետորեն օգտագործել առկա ռեսուրսները:

Մրցունակությունն ամբողջությամբ արմատավորված է արտադրողականության հասկացության մեջ:

Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից մշակվող Համաշխարհային մրցունակության զեկույցը (ՀՄԶ) երկրների մրցունակության գնահատման առաջատար աղբյուր

Է:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը ՀՏՖ-ի Համաշխարհային մրցունակության կենտրոնի գործընկեր կազմակերպությունն է 2005թ. հունվարից ի վեր: Հիմնական համագործակցությունը ծավալվում է Հայաստանը Համաշխարհային մրցունակության զեկույցում ընդգրկելու ուղղությամբ, որի արդյունքում Հայաստանը առաջին անգամ ներառվեց 2005-/2006թթ զեկույցում:

2013-2014 թթ. Համաշխարհային մրցունակության զեկույցի համաձայն՝ Հայաստանը 148 երկրների շարքում 79-րդն է:

---

#### [Զբոսաշրջության մրցունակություն \[4\]](#)

Շատ երկրներում տուրիզմը ազգային հարստության և տնտեսական աճի կարևորագույն աղբյուրներից է: Հայաստանում այն ծանաչվել է տնտեսության զերակա ճյուղ:

**Զբոսաշրջության հետազոտության մեթոդները** հետազոտության մեթոդները և վերլուծության մեթոդները որոշումների կայացման համար:

Ի-Վի Քոնսալթինգն իր մասնակցությունն է ունեցել Հայաստանի զբոսաշրջության ռազմավարության հայեցակարգի մշակմանը՝ հանդիսանալով վերջինիս համահեղինակը՝ Նախագծերի հետ համատեղ:

Մենք օժանդակում ենք Համաշխարհային տնտեսական ֆորումի (ՀՏՖ) կողմից Զբոսաշրջության մրցունակության զեկույցի պատրաստմանը, որտեղ Հայաստանը առաջին անգամ ընդգրկվել է 2006 թվականին: Չեկույցն օգտագործում է ինչպես կոշտ տվյալներ տեղեկատվության բաց աղբյուրներից, այնպես էլ ՀՏՖ-ի կողմից իրականացվող Ընկերությունների ղեկավարների հարցման արդյունքները: Հայաստանում հարցման գործընթացը ամբողջովին համակարգվում է «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի կողմից:

---

#### [Տեղեկատվական տեխնոլոգիաների մրցունակություն \[5\]](#)

Տեղեկատվական տեխնոլոգիաները (SS) խթանիչ ուժ են համաշխարհային տնտեսության արագընթաց զարգացման համար: Համաշխարհային տնտեսական ֆորումի հետ մեր սերտ համագործակցության շնորհիվ Հայաստանի SS ոլորտը հետազոտվում և ներառվում է Համաշխարհային SS զեկույցի մեջ: Վերջինս արժեքավոր միջոց է երկրի տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև զարգացման դինամիկան գնահատելու համար:

Visit also:



**Source URL:** <http://ev.am/hy/brainwork/competitiveness-and-growth-reports>

#### **Links**

- [1] <http://ev.am/hy/brainwork/competitiveness-and-growth-reports>
- [2] <http://ev.am/hy/competitiveness/7>
- [3] <http://ev.am/hy/competitiveness/8>
- [4] <http://ev.am/hy/competitiveness/10>
- [5] <http://ev.am/hy/competitiveness/9>

